

CalWORKs-ի ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Եթե դուք Կալիֆոռնիայի Աշխատանքի Հնարավորության և Երեխաների հանդեպ պատասխանատվության Ծրագրի (California Work Opportunity and Responsibility to Kids (CalWORKs) Program) համաձայն կանխիկ օգնություն եք ստանում, դուք պետք է վարչաշրջանին ապացույց ներկայացնեք, որ ձեր ընտանիքի անդամ մինչև 6 տարեկան երեխան(ները) ստացել են համապատասխան պատվաստում(ներ)ը:

ԱՊԱՑՈՒՅՑ

Եթե դուք CalWORKs-ի թեկնածու եք, ապա Medi-Cal-ի հաստատումից հետո 30 օրվա ընթացքում կամ CalWORKs-ի համար դիմումի ամսաթվից սկսած 45 օրվա ընթացքում պետք է ներկայացնեք իմունիզացիայի ապացույցը, եթե դուք արդեն Medi-Cal եք ստանում:

Եթե դուք CalWORKs-ի ներկայիս նպաստառու եք, դուք պետք է 45 օրվա ընթացքում ապացույցը ներկայացնեք այն բանից հետո, երբ վարչաշրջանը ծանուցի ձեզ, որ իմունիզացիայի ապացույց է պահանջվում: Աջակցության բաժնում ավելացված 6 տարեկանից ցածր յուրաքանչյուր երեխայի համար դուք պետք է Medi-Cal-ի հաստատումից հետո 30 օրվա ընթացքում իմունիզացիայի ապացույց ներկայացնեք:

Եթե դուք ձեր երեխայի(ներ) իմունիզացիա ստանալու հետ կապված խնդիր ունեք, անմիջապես կապվեք ձեր աշխատողի հետ:

ԱԶԱՏՈՒՄ ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՅԻՑ

Երեխան(ները) ազատվում է(են) այս իմունիզացիայի հրամաններից, եթե ծնողը կամ խնամակալը ներկայացնում են.

- Գրավոր հաշվետվություն, որը հատատում է, որ երեխան(ները) բժշկական պատճառներով չպետք է իմունիզացվեն: Հաշվետվությունը պետք է լինի նրանց բժշկի կամ առողջապահական խնամքի մասնագետի կողմից, ով աշխատում է բժշկի հսկողության ներքո և պետք է բժշկական վիճակի նկարագրություն տրամադրի, ինչպես նաև այն, թե տվյալ վիճակը ժամանակավոր է, թե մնայուն:
- Երդումով հաստատված հաշվետվություն առ այն, որ իմունիզացիաները նրա հավատարմի դեմ են:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄ

Եթե դուք մինչև 6 տարեկան եղող բոլոր երեխաների համար իմունիզացված լինելու ապացույց չներկայացնեք աջակցության բաժին, ապա ձեր կանխիկ օգնությունը կկրճատվի կանխիկ օգնության ծնողին(ներին) կամ խնամակալ ազգականին(ներին) հասանելիք համարժեք գումարի չափով:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՆԵՐ

Իմունիզացիոն կանոնների վերաբերյալ խորհրդատվական հանձնաժողովը, Ամերիկայի մանկաբույժների ակադեմիան և Ընտանեկան բժիշկների ամերիկյան ակադեմիան ներկայումս երաշխավորում են հետևյալ իմունիզացիաները մինչև 6 տարեկան երեխաների համար.

- Պոլիոմելիտ
- Դիֆտերիա, տետանուս և կապույտ հազ (DTaP կամ DTP)
- Կարմրուկ, խոզուկ և կարմրախտ(MMR)
- Varicella Virus Vaccine *(Ջրծաղիկի համար)
- Հեպատիտ Բ
- Hemophilus influenza type b (մինիգիտի համար)

ՈՐՏԵՂ ԿԱՐԵԼԻ Է ՄՏԱՆԱԼ ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՆԵՐԸ

- Մատակարարող, ով ընդունում է Medi-Cal
- Medi-Cal կառավարվող խնամքի ծրագրի ձեռնարկված բժիշկը
- Վարչաշրջանի հանրային առողջապահական կլինիկա
- Ձեր վարչաշրջանում առկա ցանկացած այլ տեղ, որտեղ առաջարկում են անվճար կամ ցածր գնով իմունիզացիաներ
- Երեխայի առողջության և հաշմանդամության կանխարգելման (CHDP) մատակարարող

ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՆՉՊԵՍ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՍՎՈՐԹՅՈՒՆ ՄՏԱՆԱԼ

Դուք կարող եք զանգահարել.

- Ազգային իմունիզացիայի տեղեկատվության թեժ գծին, որն հովանավորվում է Հիվանդությունների կառավարման կենտրոնի(CDC) և սոցիալական առողջապահության ամերիկյան սոցիալագիայի կողմից: Չանգահարեք երկուշաբթիից ուրբաթ երեկոյան 5-ից մինչև 8-ը.

- Անգլերենով՝ 1-800-232-2522
հեռախոսահամարով

- Իսպաներենով՝ 1-800-232-0233
հեռախոսահամարով

- Ձեր տեղական առողջապահության դեպարտամենտի Իմունիզացիոն/ճառայությունների Ծրագրին կամ CHDP Ծրագիրն է (կախված վարչաշրջանից)

* Ջրծաղիկի համար նախատեսված պատվաստումը կարող է հասանելի չլինել բոլոր բժիշկների մոտ:

Եթե հարցեր ունեք, զանգահարեք ձեր աշխատողին: